

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Հաստատված է

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի
գիտական խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի
նիստի թիվ 06/01 որոշմամբ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) Կապանի մասնաճյուղի (այսուհետ՝ մասնաճյուղ) գիտական խորհրդի (այսուհետ՝ գիտական խորհուրդ) կանոնակարգը մշակված է Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական ակտերի, համալսարանի կանոնադրության և մասնաճյուղի կանոնադրության հիման վրա:
2. Գիտական խորհուրդը մասնաճյուղի տնօրենի (այսուհետ՝ տնօրեն) նախագահությամբ գործող մասնաճյուղի ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կառավարման մարմին է:
3. Սույն կանոնակարգը սահմանում է մասնաճյուղի գիտական խորհրդի ձևավորման, գործունեության իրականացման, որոշումների ընդունման, գիտական խորհրդում ընտրության (մրցույթի) անցկացման և քվեարկության կարգերը, աշխատակարգը, իրավասությունները, գործառույթները, գիտական խորհրդի նախագահի, քարտուղարի և անդամների իրավունքներն ու պարտականությունները:

II. Գիտական խորհրդի ձևավորումը

4. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:
5. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 32-ը:
6. Գիտական խորհրդի ընտրովի կազմը ձևավորվում է մասնաճյուղի գիտամանկավարժական աշխատողներից և ուսանողության ներկայացուցիչներից:
7. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենը, գիտական քարտուղարը, տնօրենի տեղակալները, ծրագրամեթոդական աշխատանքների և կրթության կազմակերպման բաժնի պետը, գլխավոր հաշվապահը, ֆակուլտետների դեկանները, բաժանմունքների վարիչները, ամբիոնների վարիչները, մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության նախագահը և մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև տնօրենի առաջարկմամբ մասնաճյուղի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, մասնաճյուղի առանձին դասախոսներ ու գիտաշխատողներ, կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, մասնաճյուղի հետ համագործակցող գործատու և այլ գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնաճյուղի ուսանողության ներկայացուցիչներ:
8. Ի պաշտոնե և տնօրենի կողմից առաջարկվող անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի անդամների թվի 50 տոկոսը:
9. Ուսանողության ներկայացուցիչների (ներառյալ մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահը) թիվը չի կարող պակաս լինել գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսից:
10. Ուսանողների ներկայացուցիչների առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է մասնաճյուղի ուսանողական խորհուրդը: Գիտական խորհրդի մնացած անդամներն ընտրվում են մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների կողմից:
11. Գիտական խորհրդի կազմը հաստատում է համալսարանի ռեկտորը:
12. Գիտական խորհրդի նախագահը տնօրենն է:
13. Գիտական խորհրդի քարտուղարը նշանակվում է տնօրենի հրամանով:

III. Գիտական խորհրդի գործունեությունը և իրավասությունները

14. Գիտական խորհուրդը՝
 - 1) հաստատում է իր կանոնակարգը և աշխատակարգը,
 - 2) տնօրենի ներկայացմամբ քննարկում է մասնաճյուղի զարգացման գլխավոր ուղղությունները,
 - 3) քննարկում և համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում առաջարկություններ՝ մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու վերաբերյալ,
 - 4) ըստ անհրաժեշտության ստեղծում է գիտական խորհրդին կից գործող մշտական և (կամ) ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը,
 - 5) հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և առաջարկություն է ներկայացնում համալսարանին՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ընդունելության պլանների վերաբերյալ,

- 6) քննարկում է մասնաճյուղի տարեկան գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը և ներկայացնում համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը,
 - 7) քննարկում և համալսարանի ղեկավարին է ներկայացնում մասնաճյուղի տարեկան ծախսերի նախահաշվի նախագիծը՝ համալսարանի նախահաշվի մեջ ընդգրկելու և համալսարանի հոգաբարձուների խորհրդում հաստատման ներկայացնելու համար,
 - 8) տնօրենի ներկայացմամբ հաստատում է մասնաճյուղի հաստիքացուցակը և հավանություն տալիս այն ներկայացնելու համալսարանի ղեկավարությանը,
 - 9) քննարկում և համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարման, վերանվանման կամ վերակազմակերպման վերաբերյալ,
 - 10) տնօրենի ներկայացմամբ հաստատում է մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը և այլ ներքին իրավական ակտերը,
 - 11) համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ստեղծման, ուսումնական պլանների և դրանց փոփոխությունների վերաբերյալ,
 - 12) համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում թեկնածություններ մասնաճյուղի ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորա-դասախոսական կազմի թափուր պաշտոնատեղերի, ինչպես նաև անվանական կրթաթոշակներ նշանակելու համար,
 - 13) առաջադրում է մասնաճյուղի ներկայացուցիչներ համալսարանի գիտական խորհրդի և հոգաբարձուների խորհրդի կազմերում,
 - 14) քննարկում է մասնաճյուղի կրթության և գիտության զարգացման հիմնահարցեր, լսում գիտական հաղորդումներ, իրականացնում սույն կանոնադրությունից բխող՝ ուսումնական, մեթոդական, հետազոտական և կազմակերպչական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:
15. Գիտական խորհուրդը քննարկված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ: Գիտական խորհրդի որոշումների կատարումը պարտադիր է մասնաճյուղի բոլոր աշխատակիցների և ուսանողության համար: Գիտական խորհրդի առանձին որոշումները կիրարկվում են տնօրենի հրամաններով: Որոշումների նախագծերը նախապես ներկայացվում են գիտական խորհրդի քարտուղարին (գիտական քարտուղար) կամ մուտքագրվում են մասնաճյուղի ընդհանուր բաժին: Գիտական խորհրդի քարտուղարը ծանոթանում է որոշման նախագծի ու դրա հիմնավորումների հետ և այն ներկայացնում գիտական խորհրդի նախագահին՝ շրջանառության մեջ դնելու համար:
16. Տնօրենն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում վերջինիս լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, համալսարանի կանոնադրությանը, մասնաճյուղի կանոնադրությանը, սույն կանոնակարգին, համալսարանի և ներքին իրավական այլ ակտերին: Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք տնօրենի կողմից կասեցվել են ընդունման ժամանակ ընթացակարգային խախտումներ թույլ տալու պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության գիտական խորհրդի նիստում: Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին տնօրենի հրամանները պետք է լինեն հիմնավոր և պատճառաբանված:

IV. Գիտական խորհրդի նիստերը

17. Գիտական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
18. Գիտական խորհրդի նիստերը, որպես կանոն, գումարվում են ուսումնական տարվա յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել արտահերթ նիստեր:
19. Գիտական խորհրդի նիստի մասին գիտական խորհրդի անդամները, որպես կանոն, ծանուցվում են նիստից առնվազն 3 օր առաջ (բացառությամբ՝ արտահերթ նիստերի): Գիտական խորհրդի նիստի օրակարգային հարցերը կարող են նախապես քննարկվել գիտական խորհրդի մշտական հանձնաժողովներում:
20. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ գիտական խորհրդի նախագահի կողմից կամ գիտական խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց կողմից առաջարկված օրակարգով և ժամկետներում: Գիտական խորհրդի նախագահին արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը: Հրատապ հարցերի քննարկման համար գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գիտական խորհրդի նիստը կարող է հրավիրվել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ առանց պահպանելու սույն կանոնակարգի 19-րդ կետի պահանջները:
21. Գիտական խորհրդի նիստը նախագահում է գիտական խորհրդի նախագահը (տնօրենը): Տնօրենի բացակայության դեպքում գիտական խորհրդի նիստը նախագահում է տնօրենի կողմից նշանակված ժամանակավոր պաշտոնակատարը:
22. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են:
23. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ գաղտնի քվեարկության մասին: Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:
24. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով գիտական խորհուրդն իր իրավասությունների սահմաններում որոշում կարող է ընդունել ցանկացած հարցի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնց համար մասնաճյուղի կանոնադրությամբ կամ սույն կանոնակարգով բացառապես սահմանված է որոշում ընդունել փակ գաղտնի քվեարկությամբ:
25. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ եթե քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում են ներկայացրել գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:
26. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ գիտական խորհրդի նիստ գումարելու նպատակով գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ գիտական խորհրդի քարտուղարը էլեկտրոնային եղանակով (e-mail համակարգ) նիստի օրակարգի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում գիտական խորհրդի անդամներին՝ կցելով դիտարկվող հարցերի վերաբերյալ առաջարկվող որոշման նախագծերը և անհրաժեշտ հիմնավորումները: Գիտական խորհրդի անդամը ներկայացված հարցերի

վերաբերյալ կարող է քվեարկել՝ «Կողմ», «Դեմ» կամ «Ձեռնպահ», որի հիմքով գիտական քարտուղարը կազմում է արձանագրություն:

V. Գիտական խորհրդի նախագահի, քարտուղարի և անդամների իրավունքներն ու պարտականությունները

27. Գիտական խորհրդի նախագահը՝
- 1) կազմակերպում է գիտական խորհրդի աշխատանքները,
 - 2) կազմում է գիտական խորհրդի նիստի օրակարգը,
 - 3) նախագահում է գիտական խորհրդի նիստերը,
 - 4) քննարկման նպատակով շրջանառության մեջ է դնում գիտական խորհրդի որոշումների նախագծերը,
 - 5) գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում գիտական խորհրդին կից գործող մշտական և (կամ) ժամանակավոր հանձնաժողովների կազմերը,
 - 6) ամփոփում է օրակարգի հարցի քննարկումը,
 - 7) հաստատում է գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները, կանոնները, կանոնակարգերն ու կարգերը,
 - 8) իրականացնում է գիտական խորհրդի գործունեության հետ կապված և մասնաճյուղի կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:
28. Գիտական խորհրդի քարտուղարը՝
- 1) կազմում է գիտական խորհրդի նիստերի արձանագրությունները,
 - 2) նախապատրաստում է գիտական խորհրդի նիստերը, նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցում է գիտական խորհրդի անդամներին,
 - 3) գիտական խորհրդի նիստն սկսելուց առաջ կատարում է գիտական խորհրդի անդամների գրանցում, որը հաստատագրվում է նիստին ներկա անդամների ստորագրությամբ,
 - 4) ստորագրում է գիտական խորհրդի նիստերի արձանագրությունները և որոշումները,
 - 5) սահմանված ժամկետներում ու կարգով պահպանում է գիտական խորհրդի նիստերի արձանագրությունները և որոշումները,
 - 6) պատրաստում է փակ գաղտնի քվեարկության քվեաթերթիկները, քվեարկությանը մասնակցող գիտական խորհրդի անդամների ցուցակը, քվեարկության արդյունքների գրանցման ձևաթղթերը և դրանք հանձնում հաշվիչ հանձնաժողովի նախագահին,
 - 7) ապահովում է գիտական խորհրդի որոշումների նախագծերի կազմումը,
 - 8) ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է ըստ պատկանելության,
 - 9) վեցամսյա պարբերությամբ գիտական խորհրդին է ներկայացնում զեկույց գիտական խորհրդի որոշումների կատարման մասին:
29. Գիտական խորհրդի անդամն իրավունք ունի՝
- 1) մասնաճյուղի ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն գիտական խորհրդի իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ,
 - 2) գիտական խորհրդի օրակարգի հարցերի վերաբերյալ հայտնել կարծիքներ, տալ հարցեր, մասնակցել հարցերի քննարկմանը, ներկայացնել առաջարկություններ

քննարկվող նախագծերի վերաբերյալ,

- 3) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել գիտական խորհրդի հանձնաժողովների, ֆակուլտետների խորհուրդների նիստերին,
 - 4) սահմանված կարգով գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել որոշման նախագծեր՝ գիտական խորհրդի լիազորության սահմաններում գտնվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ:
30. Գիտական խորհրդի անդամը պարտավոր է՝
- 1) մասնակցել գիտական խորհրդի նիստերին: Նիստերին մասնակցելու անհնարինության դեպքում տեղեկացնել գիտական խորհրդի քարտուղարին,
 - 2) կատարել գիտական խորհրդի որոշումները, գիտական խորհրդի նախագահի հանձնարարությունները,
 - 3) մասնակցել գիտական խորհրդի կողմից քննարկվող հարցերի քվեարկությանը,
 - 4) գիտական խորհրդի հանձնաժողովում ընդգրկված լինելու դեպքում՝ մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, կատարել հանձնաժողովի նախագահի հանձնարարությունները:
31. Գիտական խորհրդի անդամը հրաժարական տալու համար տնօրենի ներկայացմամբ դիմում է հղում համալսարանի ռեկտորին: Հրաժարականն ուժի մեջ է մտնում այն ընդունելու պահից:
32. Գիտական խորհրդի ընտրովի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կարող է կատարվել առաջադրող ստորաբաժանման առաջարկությամբ, տնօրենի ներկայացմամբ՝ ռեկտորի հրամանով:
33. Գիտական խորհրդի անդամի թափուր տեղը լրացվում է այն ստորաբաժանման կազմից և այն կարգով, որով գիտական խորհրդի անդամի լիազորություն էր ձեռք բերել գիտական խորհրդի կազմից դուրս եկած անձը:

VI. Գիտական խորհրդի նիստի ընթացակարգը

34. Գիտական խորհրդի նիստը բացում է գիտական խորհրդի նախագահը և քննարկման ներկայացնում նիստի օրակարգի նախագիծը: Օրակարգի նախագիծը քննարկվում և հաստատվում է գիտական խորհրդի նիստին ներկա անդամների բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:
35. Նիստի օրակարգի նախագծում հարցեր ներառելու առաջարկով գիտական խորհրդի անդամները գրավոր առաջարկություններ կարող են ներկայացնել գիտական խորհրդի քարտուղարին նիստից առնվազն 2 օր առաջ: Օրակարգի մասին առաջարկություն ներկայացրած անձն իրավունք ունի իր նախաձեռնությամբ հետ վերցնել առաջարկությունը, որի դեպքում այն չի քննարկվում: Հրատապ դեպքերում՝ գիտական խորհրդի որոշմամբ, հարցը կարող է ներառնվել տվյալ նիստի օրակարգում:
36. Գիտական խորհրդի նիստի օրակարգի նախագիծը կարող է քվեարկությամբ համալրվել կամ փոխարինվել այլ հարցերով:
37. Նիստի օրակարգի ձևավորումից հետո, գիտական խորհրդի նախագահը պարզաբանում է օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը:
38. Գիտական խորհրդի նիստում օրակարգի հարցերը ներկայացնում (զեկուցում) է նախագահը կամ գիտական քարտուղարը կամ նախագահի հանձնարարությամբ՝ տվյալ հարցը նախապատրաստող գիտական խորհրդի անդամը:
- Նիստը նախագահողի առաջարկությամբ գիտական խորհուրդը սահմանում է

հարցի ներկայացմանը հատկացվող ժամանակը:

39. Պրոֆեսորադասախոսական և այլ պաշտոնների ընտրության, ինչպես նաև դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչման համար ներկայացված գործերը, որպես կանոն, զեկուցում է գիտական խորհրդի քարտուղարը:
40. Օրակարգի հարցը զեկուցելուց հետո նիստին մասնակիցների կողմից կարող են հարցեր ուղղվել զեկուցողին՝ այնուհետև քննարկվող հարցի վերաբերյալ կատարվում է մտքերի փոխանակում, որով ավարտվում է հարցի քննարկումը: Քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողին հարցեր կարող են ուղղել և ելույթ ունենալ գիտական խորհրդի անդամներն ու հրավիրվածները: Գիտական խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել հարցի քննարկման այլ աշխատակարգ:
41. Օրակարգի հարցի քննարկմանը հաջորդում է որոշման ընդունումը: Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել հարցի քննարկումից անմիջապես հետո կամ բոլոր հարցերի քննարկումից հետո: Նիստը նախագահողը սկզբում քվեարկության է դնում գիտական խորհրդի անդամների կողմից ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա զեկուցողի կողմից նախագծի լրամշակված տարբերակը: Որոշում ընդունելու համար գիտական խորհրդի անդամների բավարար թվով «Կողմ» ձայներ չստանալու դեպքում քվեարկության են դրվում նախագծի այլ տարբերակներ: Այդ դեպքում ևս որոշում չընդունելու պարագայում նախագիծն ուղարկվում է լրամշակման:
42. Պրոֆեսորադասախոսական կազմի, ամբիոնների վարիչների, ֆակուլտետների դեկանների ընտրության, մրցանակների ներկայացման, ինչպես նաև դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են փակ գաղտնի քվեարկության արդյունքով:
Գիտական խորհրդի որոշմամբ փակ գաղտնի քվեարկության կարող են դրվել նաև անձնական թեկնածությունների վերաբերյալ այլ հարցեր:

VII. Քվեարկության կարգը

43. Գիտական խորհրդում քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեն գիտական խորհրդի նիստին մասնակցող բոլոր անդամները՝ հավասար իրավունքով:
44. Բաց քվեարկությունը կատարվում է՝ գիտական խորհրդի նիստին ներկա անդամների մասնակցությամբ: Որոշումն ընդունվում է գիտական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Բաց քվեարկություն է համարվում նաև էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով կատարվող քվեարկությունները:
45. Բաց քվեարկության ընթացակարգով հարցերի համար որոշումը կարող է ընդունվել առանց քվեարկության, եթե առարկություններ չկան:
46. Բաց քվեարկության դեպքում թեկնածուն կարող է հայտնել ինքնաբացարկ մինչև քվեարկությունն սկսելը:
47. Այն դեպքում, երբ բաց քվեարկության ժամանակ «Կողմ», «Դեմ», «Ձեռնպահ» ձայների թվաքանակներն իրար մոտ են և ձայների հաշվառման անճշտությունը կարող է ազդել քվեարկության արդյունքի վրա, ձայների հաշվումը հանձնարարվում է հաշվիչ հանձնաժողովին, որը կազմավորվում է համաձայն սույն կանոնակարգի 51 կետի պահանջների՝ գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամի քվեարկությամբ արտահայտված դիրքորոշումն արձանագրելու և քվեարկության արդյունքները հրապարակելու համար:

48. Փակ գաղտնի քվեարկության համար պատրաստվում են քվեաթերթիկներ: Մրցութային յուրաքանչյուր տեղի (խմբի) թեկնածուների համար պատրաստվում է առանձին քվեաթերթիկ:
49. Փակ գաղտնի քվեարկության դեպքում թեկնածուն կարող է հայտնել ինքնաբացարկ մինչև քվեաթերթիկում ընդգրկվելը:
50. Փակ գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկում նշվում է քվեաթերթիկի լրացման կարգը: Քվեաթերթիկի ձախ կողմում՝ թեկնածուների հերթական համարում այբբենական կարգով նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, իսկ քվեաթերթիկի աջ կողմում յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան դիմաց նշվում են «Կողմ եմ» և «Դեմ եմ» բառերը, դրանցից յուրաքանչյուրի դիմաց տեղադրվում է առանց նշումի վանդակներ: Քվեաթերթիկի նմուշը սահմանված է սույն կանոնակարգի թիվ 1 հավելվածում: Անձին չվերաբերող հարցերով փակ (գաղտնի) քվեարկության քվեաթերթիկում հավելված 1-ի ձևանմուշում անձի անվանման փոխարեն գրվում է քվեարկվող հարցը:
51. Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և արդյունքներն ամփոփելու համար գիտական խորհրդի նիստին ներկա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ առնվազն 3 անձից բաղկացած կազմով: Թեկնածուներն առաջադրվում են գիտական խորհրդի նիստում: Հաշվիչ հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել քվեարկությանն առաջադրված թեկնածուները: Հաշվիչ հանձնաժողովը ստեղծվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների փոխատեղման (ռոտացիայի) սկզբունքի կիրառմամբ: Հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է յուրաքանչյուր նիստում գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի ցուցակային կազմի:
52. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:
53. Գիտական խորհրդի քարտուղարը փակ գաղտնի քվեարկության քվեաթերթիկները, գիտական խորհրդի անդամների ցուցակը և քվեարկության արդյունքների գրանցման ձևաթղթերը հանձնում է հաշվիչ հանձնաժողովի նախագահին:
54. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անց է կացնում քվեարկությունը, պարզաբանում քվեարկության կարգը, քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, ապահովում քվեարկության համար անհրաժեշտ պայմաններ, ընտրողների ազատ ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:
55. Քվեաթերթիկների գրանցման ցուցակները վարելու, քվեաթերթիկները բաժանելու և քվեատուփը հսկելու համար, հաշվիչ հանձնաժողովի նախագահը հաշվիչ հանձնաժողովի անդամների միջև կատարում է աշխատանքի բաժանում:
56. Քվեաթերթիկները քվեարկողներին հանձնում է հաշվիչ հանձնաժողովի անդամը: Մրցութային յուրաքանչյուր տեղի (խմբի) քվեարկության համար քվեարկողին տրվում է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողն ստորագրում է ցուցակում՝ իր անվան դիմաց: Քվեաթերթիկները բաժանելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը, մինչև քվեարկության ավարտը մարում է չհանձնված քվեաթերթիկները, տեղադրում առանձին ծրարի մեջ, փակում: Ծրարը վավերացվում է հաշվիչ հանձնաժողովի նախագահի և հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրությամբ:
57. Քվեաթերթիկն ստանալուց հետո քվեարկողն ինքնուրույն, գաղտնի լրացնում է քվեաթերթիկը: Քվեարկողը քվեաթերթիկի իր նախընտրած թեկնածու(ներ)ի օգտին քվեարկելու դեպքում, այդ թեկնածու(ներ)ի ազգանվան դիմաց «Կողմ եմ» բառի դիմաց՝ դատարկ վանդակում, դնում է V-աձև նշանը, իսկ դեմ քվեարկելու դեպքում նույն նշանը

դնում է «Դեմ եմ» բառի դիմաց դատարկ վանդակում: Այդ վանդակներում այլ նշումներ չեն կատարվում: Նշումները կատարվում են միայն գրիչով:

58. Քվեարկողը քվեարկության սենյակում կամ քվեարկության խցիկում քվեաթերթիկում նշում կատարելուց հետո ծալում է քվեաթերթիկը և գցում հաշվիչ հանձնաժողովի կողմից նախօրոք ստուգված և կնքված քվեատուփի մեջ:
59. Քվեարկությունն ավարտվելուց անմիջապես հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ առանձին սենյակում բացում է քվեատուփը, հանում մեկ քվեաթերթիկ, հայտարարում քվեաթերթիկի վավեր կամ անվավեր լինելու մասին, ցուցադրում այն հանձնաժողովի անդամներին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է, թե ինչպես է քվեարկված, ցուցադրում հանձնաժողովի անդամներին և ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի՝ հայտարարում և թեկնածուի ազգանվան դիմաց գրանցում է քվեարկության արդյունքը, որից հետո հանում է հաջորդ քվեաթերթիկը և նույնը կրկնում բոլոր քվեաթերթիկների համար:
60. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝
- ա) թեկնածուներից յուրաքանչյուրի ազգանվան դիմաց դատարկ վանդակներից միայն մեկում է կատարված V-աձև նշում,
 - բ) չկան չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ, ջնջումներ,
 - գ) առկա է տվյալ մրցույթի համար սահմանված տեղերի քանակից ոչ ավելի կողմ քվեարկություն,
 - դ) նշումը կատարված է գրիչով:
61. Անվավեր են ճանաչվում այն քվեաթերթիկները, որոնցում՝
- ա) որևէ թեկնածուի ազգանվան դիմաց դատարկ վանդակներում V-աձև նշում չի կատարված կամ կատարված է մեկից ավել V-աձև նշում,
 - բ) առկա է տվյալ մրցույթի համար սահմանված տեղերի քանակից ավելի կողմ քվեարկություն,
 - գ) կան չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ, ջնջումներ,
 - դ) նշումը չի կատարված գրիչով:
62. Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու մասին որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:
63. Քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվում է յուրաքանչյուր թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված, ինչպես նաև անվավեր համարված քվեաթերթիկների թիվը, ամփոփում է քվեարկության արդյունքները և երկու օրինակից կազմում արձանագրություն:
64. Արձանագրությունը կազմելուց հետո յուրաքանչյուր անձի (խմբի) համար հաշվիչ հանձնաժողովի նախագահը ծրարում է քվեարկված քվեաթերթիկները, վավերացնում իր և հաշվիչ հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:
65. Արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ ստացած ձայների քանակի նվազման հաջորդականության: Ձայների քանակը որոշվում է ըստ թեկնածուի «Կողմ եմ» բառերի դիմաց՝ դատարկ վանդակներում դրված V-աձև նշանների:
66. Արձանագրությունները ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահը և հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները (արձանագրության ձևը սահմանված է սույն կանոնակարգի թիվ 2 հավելվածում):
67. Արձանագրությունները կազմելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկների ծրարները և արձանագրության մեկ օրինակը ծրարում է,

վավերացնում իր և հաշվիչ հանձնաժողովի անդամների ստորագրությամբ ու հանձնում գիտական խորհրդի նախագահին:

68. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը գիտական խորհրդի նիստում հրապարակում է փակ գաղտնի քվեարկության արդյունքները, առաջարկում հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և արձանագրության երկրորդ օրինակը հանձնում գիտական խորհրդի նախագահին: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության երկրորդ օրինակը կցվում է գիտական խորհրդի նիստի արձանագրությանը:
69. Գիտական խորհուրդը, քննարկելով ընտրությունների անցկացման ընթացքը և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը, բաց քվեարկությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
- ա) թեկնածու(ներ)ի՝ ընտրությունում (մրցույթում) հաղթող(ներ) ճանաչվելու մասին,
 - բ) առաջին փուլի արդյունքներով ընտրությունում (մրցույթում) հաղթող(ներ) ճանաչվելու և ընտրության (մրցույթի) համար հատկացված տեղերի լրացման նպատակով ընտրության երկրորդ փուլ անցկացնելու մասին,
 - գ) ընտրությունն (մրցույթն) անվավեր ճանաչելու մասին,
 - դ) ընտրությունը (մրցույթը) չկայացած ճանաչելու մասին,
 - ե) կրկնակի ընտրություն (մրցույթ) անցկացնելու մասին:
70. Գիտական խորհրդի որոշումը ընտրությունում (մրցույթում) հաղթող(ներ) ճանաչվելու մասին.
- ա) գիտական խորհուրդը որոշում է ընդունում այն թեկնածուների՝ ընտրությունում (մրցույթում) հաղթող(ներ) ճանաչվելու մասին, ովքեր ընտրության (մրցույթի) համար սահմանված տեղերի թվաքանակին համապատասխան ստացել են ընտրողների ձայների 50%-ից ավելի առավել քանակով «Կողմ» ձայներ,
 - բ) ընտրության (մրցույթի) երկրորդ փուլում ընտրությունում (մրցույթում) հաղթող է ճանաչվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:
- 71.1. Գիտական խորհրդի որոշումը ընտրության (մրցույթի) երկրորդ փուլ անցկացնելու մասին.
- ա) գիտական խորհուրդը որոշում է ընդունում 50%-ից ավելի, առավել քանակով «Կողմ» ձայներից պակաս, հավասար քանակով «Կողմ» ձայներ ստացած թեկնածուների միջև ընտրության (մրցույթի) երկրորդ փուլ անցկացնելու մասին, եթե 50%-ից ավելի քանակով «Կողմ» ձայներ ստացածների թիվը գերազանցում է ընտրության (մրցույթի) համար հատկացված տեղերի քանակից:
- 71.2. Ընտրության (մրցույթի) երկրորդ փուլն անց է կացվում նույն օրը:
- 72.1. Գիտական խորհրդի որոշումը ընտրությունն (մրցույթն) անվավեր ճանաչելու մասին.
- ա) գիտական խորհուրդն ընտրությունը (մրցույթը) ցանկացած փուլում անվավեր է ճանաչում, եթե ընտրության (մրցույթի) նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել սույն կանոնակարգի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության (մրցույթի) արդյունքների վրա:
- 72.2. Ընտրությունն (մրցույթն) անվավեր ճանաչվելու դեպքում թեկնածուների նույն կազմով անցկացվում է վերաքվեարկություն: Վերաքվեարկություն կազմակերպելու և անցկացնելու օրն ու ժամը սահմանվում են տնօրենի հրամանով (համալսարանի իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ տնօրենի ներկայացմամբ համալսարանի ռեկտորի հրամանով):
- 72.3. Թեկնածուների նույն կազմով վերաքվեարկություն կարող է անցկացվել միայն մեկ անգամ:

- 73.1. Գիտական խորհրդի որոշումը ընտրությունը (մրցույթը) չկայացած ճանաչելու մասին.
- ա) գիտական խորհուրդն ընտրությունը (մրցույթը) չկայացած է ճանաչում (բացառությամբ՝ երկրորդ փուլի), եթե քվեարկված թեկնածուներից ոչ ոք չի ստացել 50%-ից ավելի քանակով «Կողմ» ձայներ,
 - բ) վերաքվեարկության արդյունքների հիման վրա ընտրությունն (մրցույթն) անվավեր են ճանաչվել:
- 73.2. Ընտրությունը (մրցույթը) չկայացած ճանաչվելու դեպքում նոր ընտրություն (մրցույթ) կազմակերպելու և անցկացնելու օրն ու ժամը սահմանվում են տնօրենի հրամանով (համալսարանի իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ տնօրենի ներկայացմամբ համալսարանի ռեկտորի հրամանով):
- 73.3. Նոր ընտրությունն (մրցույթն) անցկացվում է թեկնածուների նոր առաջադրմամբ:
- 74.1. Գիտական խորհրդի որոշումը կրկնակի ընտրություն (մրցույթ) անցկացնելու մասին.
- ա) գիտական խորհուրդը որոշում է ընդունում կրկնակի ընտրություն (մրցույթ) անցկացնելու մասին, եթե ընտրության (մրցույթի) արդյունքում ընտրված ընտրությունում (մրցույթում) հաղթող(ներ)ի թիվը պակաս է ընտրության (մրցույթի) համար հատկացված տեղերի քանակից:
- 74.2. Կրկնակի ընտրության (մրցույթի) օրը և ժամը սահմանվում են տնօրենի հրամանով (համալսարանի իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ տնօրենի ներկայացմամբ համալսարանի ռեկտորի հրամանով):

VIII. Եզրափակիչ և անցումային դրույթներ

75. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է գիտական խորհրդի որոշմամբ:
76. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և մասնաճյուղի կանոնադրությամբ:
77. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդում քվեարկությամբ հաստատվելուց անմիջապես հետո:
78. Գիտական խորհուրդը գործում է սույն կանոնակարգի ընդունման պահին առկա գիտական խորհրդի կազմով մինչև գիտական խորհրդի կողմից ««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի ձևավորման կարգ»-ի ընդունումը և ըստ այդ կարգի գիտական խորհրդի ձևավորումը:
79. Գիտական խորհրդի գործունեությունը, նրա լիազորությունների ժամկետում կարող է դադարեցվել՝ նրա հետագա գոյությունը բացառող կանոնադրական փոփոխությունների կամ համալսարանի (մասնաճյուղի) լուծարման դեպքում:

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

..... ընտրության (մրցույթի)

Քվեարկողը թեկնածուի օգտին քվեարկելու դեպքում նրա ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմաց առկա դատարկ վանդակում գրիչով նշում է V-աձև նշան, իսկ դեմ քվեարկելու դեպքում գրիչով նույն V-աձև նշանը դնում է «դեմ եմ» բառի դիմաց առկա դատարկ վանդակում: Քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

Հ/Հ	Թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը	Քվեարկություն	
1.		Կողմ եմ <input data-bbox="1043 837 1177 913" type="checkbox"/>	Դեմ եմ <input data-bbox="1331 837 1465 913" type="checkbox"/>
2.		Կողմ եմ <input data-bbox="1043 963 1177 1039" type="checkbox"/>	Դեմ եմ <input data-bbox="1331 963 1465 1039" type="checkbox"/>
3.		Կողմ եմ <input data-bbox="1043 1088 1177 1164" type="checkbox"/>	Դեմ եմ <input data-bbox="1331 1088 1465 1164" type="checkbox"/>
4.		Կողմ եմ <input data-bbox="1043 1214 1177 1290" type="checkbox"/>	Դեմ եմ <input data-bbox="1331 1214 1465 1290" type="checkbox"/>
5.		Կողմ եմ <input data-bbox="1043 1339 1177 1415" type="checkbox"/>	Դեմ եմ <input data-bbox="1331 1339 1465 1415" type="checkbox"/>

Արձանագրություն N _____

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի «_____» _____ 2015թ. նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

..... ընտրության (մրցույթի) հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

- 1.
- 2.
- 3.

Ամփոփելով 201...թ.-ին կայացած ընտրության (մրցույթի) փակ գաղտնի քվեարկության արդյունքները արձանագրեց.

- 1. գիտական խորհրդի անդամների թիվը,
- 2. քվեարկության մասնակիցների թիվը,
- 3. մարված քվեաթերթիկների թիվը,
- 4. քվեատուփում առկա քվեաթերթիկների թիվը,
- 5. անվավեր քվեաթերթիկների թիվը,
- 6. վավեր քվեաթերթիկների թիվը,
- 7. թեկնածուների ստացած ձայները՝

- 1) «կողմ», «դեմ»
- 2) «կողմ», «դեմ»
- 3) «կողմ», «դեմ»
- 4) «կողմ», «դեմ»
- 5) «կողմ», «դեմ»

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

.....